

Համեմատ վսեմ՝ ու գերաշխարհային աստուածային իմաստութիւն կայ Նորա՛ այս խօսքի մէջ, որ գնումէր սարսափելի շարշարանքներով լի մահի առաջը: Արդէն՝ Նա գիտէր Իւր աչքով տեսնելու մահն, որ առաջն էր, և որ պիտի ընդունէր Իւր արիւնը թափելով, բայց և արդէն այդ սուկայի մահի զարհուրանքներին յաղթել էր Նա Իւր սրտում, արդէն Նա իրրե յաղթող կանգնած էր, մի լինելով Իւր Հօրն Հետ, որ երկընքումն է, Նա Իւր վերայ չէ մտածում, այլ միայն իւր սրտին համար թանկագին այն մարդիկներին վերայ, որ երկրիս վերայ պէտքէ թողնէր, և կամենումէ նոցա ևս մասնակից անել նոյնպէս, իրրե մի ամենազնիւ ժառանգութեան, այն խաղաղութեանն, որ Ինքն պայծառացած կրումէր Իւր սրտի մէջ:

Խոնարհութեամբ ու հեղութեամբ մտնումեմ ես Նորա աշակերտների մէջ և աչքերս դէպի վեր բարձրացրած, աղաչումեմ՝ ու խնդրում՝ Նորան ասելով. Տէր, տո՛ւր և ինձ այդ խաղաղութիւնը, Աշխարհիս մէջ ես ևս նեղութիւն ունիմ և ուրիշ տեղ օգնութիւն չեմ կարող գտնել, բայց միայն Նորանից, որ յաղթել է աշխարհիս: Նա անտրտունջ տարաւ ամենագծուարին բանը, որ մարդիս զլիին կարող էր դալ, տարաւ հնազանդութեամբ, որովհետե այնպէս էր Իւր Հօր կամքը. Նա ժողովրդի կողմից Իւրեան առաջարկած թագաւորական թաղը արհամարհեց փուշի սլակը ընդունելու համար, որովհետե այդ էր լաւը մարդկային ազգի փրկութեան համար. Նա հրաժարվեցաւ իւր կեանքի ամենայն ուրախութիւններից, և մտածումէր միայն իւր եղբայրների փրկութեանը համար: Ի՛նչ անպատմելի մեծութիւն է տեսնվում Նորա թէ՛ մտքի և թէ՛ գործի մէջ, և ի՛նչ երկնային երջանկութեամբ պիտի լցվէր Նորա սիրտն, երբ որ Նա, հոգին աւանդելու ժամանակը, իւր բերանից հանեց այն յաղթանակի խօսքն թէ՛ « ամենայն ինչ կատարեալ է »:

Ես ևս ամենայն սիրով իմ Փրկչիս ճանապարհովն պէտքէ գնամ, պէտք է ես ևս հաւատի լաւ պատերազմն պատերազմեմ, քանի որ ողջ եմ, և ամեն իմ զլիիս եկած բաներում պէտքէ աղօթք անելով ասեմ. Տէր, ինչ որ Քո կամքդ է իմ մասին, այն լինի. միայն թէ Քո խաղաղութիւնդ տո՛ւր ինձ:

(Թարգմ.)

Գ. Ե. Ա.

ՅԻՍՈՒՍ ՆԱԶՈՎՐԵՅԻՆ ԱՆՅՆՈՒՄԷ:

Երբ Նա Երիբովին մօտենում էր, ճանապարհի վերայ նստած էր մի կոյր մուրացկան, և լսելով որ իւր մօտով անցնում էր ժողովուրդը հարցրեց. այդ ի՞նչ է: Նորան ասացին որ « Յիսուս Նազովրեցին անցնում է (Ղուկ. Էբ. 55—45) »:

Կոյր էր. ահա ինչ զրութեան մէջ էր գտնվում աղքատը նորա համար յիշատակելի այն օրը, երբ Յիսուս անցնում էր նորա մօտով. այսպէս է

և հոգեկան գրուծիւնը այն մարդիկներին որոնք չեն զիմած Յիսուսին նորանից տեսողութիւն ստանալու համար: Պօղոս առաքեալն ասումէ. «Եթէ և ծածկված է մեր աւետարանը, այն ևս միայն կորածների համար, անհաւատների համար, որոնց մտքերը կուրացրած է այս դարի աստուածը, որ չփայլէ նոցա մէջ Քրիստոսի փառքի բարի լոյսը, որ մեր աներեղոյթ Աստուծու պատկերն է (Բ. Կորնթ. ր. 3—4):

Այսպէս է ահա և քո գրուծիւնդ, ընթերցող, եթէ դու դեռ ևս չես տեսել հոգեւորապէս և դեռ չես անցել մահից դէպի կեանք: Մտածիր, ինչպէս ցաւալի էր կոյրի գրուծիւնը և համեմատիր նորա հետ քո հոգու գրուծիւնը: Ինչպէս նա չէ տեսնում տիեզերքի գեղեցկութիւնը և չէ կարողանում որոշել դոյնների տեսակները, այնպէս և դու կոյր ես այն ամեն բանի համար, ինչ որ Աստուածային հոգուց է և չես տեսնում գեղեցկութիւն նորա սուրբ խօսքի մէջ: Կոյրը երբ մտեսնումէ զարհուրելի վիճի ծայրին, չէ տեսնում նորան,—դու ուղղակի դնուստ յաւիտենական տանջանքի անդունդը և չես նկատում այդ Կոյրը կարող է ասել. ես չեմ տեսնում վիճը, ուստի և չեմ հաւատում թէ նա կայ. բայց նորա չիմանալը կարող է արդեօք արգելել նորա սարսափելի անկումն: Իսկ կարող ես ասել. ես չեմ տեսնում յաւիտենական տանջանքի անդունդը, ուստի և չեմ հաւատում թէ կայ. բայց այս կարող է արդեօք գոնէ ան ժամ մի պահասեցնել յաւիտենական տանջանքի ժամանակը:

Սակայն, փառք Աստուծուն, դեռ ևս ուշ չէ, և դու կարող ես Աստուծու խօսքից համոզվել թէ որքան կարևոր է քեզ համար ստանալ տեսողութիւն: Յիսուսն ասաց. «Ինչ ուղարկողի կամքն այն է, որ Պրդուն ամեն տեսողը և նորան հաւատացողը յաւիտենական կեանք ունենայ, և ես նորան կյարուցանեմ վերջին դատաստանին» (Յովհ. զ. 10):

Ոչ ինչքան թանկագին է հոգեւոր տեսողութիւնը: Տեսնել Յիսուսին, ճանաչել և հաւատալ նորան, նա ինքն ասումէ. «յաւիտենական կեանքն այն է, որ ճանաչեն քեզ միակ և ճշմարիտ Աստուած, և քեզանից ուղարկված Քրիստոսին (Յովհ. Ժե. 31):

Սակայն դառնանք մեր կոյրին. նա նստած է ճանապարհի վերայ և ժողովրդի խուռն բազմութիւն անցնումէ մօտով, — Այս ի՞նչ բան է, հարցնումէ նա լսելով որ անցնումէ ժողովուրդը, նորան ասացին որ «Յիսուս նազովրեցին անցնումէ»: Ի՞նչ բարեբաղդութիւն է որ Յիսուս անցնումէր այն տեղից, ուր նստած էր խեղճ կոյրը,—Անկասկած պատահում են դէպքեր այժմ ևս, երբ Յիսուս հոգով այցելումէ քաղաքներին, ընտանիքներին և մասնաւոր անձներին: Նա կարող է այցելել և քեզ, ընթերցող, այս րոպէիս: Զինի թէ յարուցեալ Յիսուսը միայն քո մօտովդ անցնէ: Օրինակ ան մուրացկան կոյրից. թողեց արդեօք որ Յիսուսը միայն նորա մօտով անցնէր: Աչ. նա զգաց իւր միայնակ յուսահատ գրուծիւնը և աղաղակեց. «Յիսուս, Դաւթի որդի, ողորմիր ինձ»: Զգում ես արդեօք և դու կոյրի պէս քո խղճալի և անելանելի գրուծիւնը: Աղաղակեցիր արդեօք դու

երբէք. « Յիսուս » ողորմիր ինձ : Ղիմեցիր արդեօք զէպի նա բոլոր սրտով այս աղօթքով : Եթէ չես զիմել , զիմիր այժմ :

Առաջն գնացողները (անտարբերները) սաստուճեին կոյրին լուելու : Այսպէս յաճախ հաւատացող մարդիկ , որոնք առաջն են գնում , իրենանց սանասրտութեամբ արգելում են փրկութիւն պատողներին : Բայց կարողացան միթէ նորա արգելել կոյրին : Այ : Նա առաւել ևս ղաղաղակուճեր : Պաւթի որդի , ողորմիր ինձ : Ղանք Յիսուսին . շարունակում արդեօք նա իւր ճանապարհը , անցնում է նա արդեօք միայն մօտով : Այ : « Յիսուս կանգնելով հրամայեց բերել կոյրին իւր մօտ , և երբ նա մօտեցաւ նորան , հարցրեց նորան . ի՞նչ ես կամենում ինձանից » : Այսպիսի է Յիսուսն , Աստուծու որդին : Արքան մեծ ողորմածութիւն է : Ինչ որ նա ասաց կոյրին , նոյնը ասում է և քեզ : Նա չէ ասում . « ի՞նչ ես կամենում դու ինչ հասար անել : Նա չէ պահանջում որ և է զոչ քեզանից : Նա ասում է . ի՞նչ ես կամենում ինչ-նչ : Ղոյրն ասաց . Տէր , ցանկանում եմ որ բացվին իմ աչքերը : Իսկ դու , ընթերցող , ի՞նչ կպատասխանես Յիսուսի հարցման : Ղասես արդեօք . Տէր ցանկանում եմ որ աչքերս բացվին :— Յիսուս ասաց կոյրին . թող բացվին քո աչքերը , քո հաւատը քեզ փրկեց : Ղոյրը հաւատաց և « իսկոյն բացվեցան աչքերը » : Բացվեցան արդեօք քո աչքերն ևս , ընթերցող , տեսնում ես արդեօք դու ևս մեր մեղքերի համար չարչարված Յիսուսին , արդարը մեղաւորների համար , որպէս զի տանէ մեզ Աստուծու մօտ : Տեսնում ես դու արդեօք Յիսուսին , որ մեռեալներից , յարութիւն առաւ և կանգնած է Աստուծու առաջ մեզ համար : Եթէ դու հաւատում ես , որ Աստուած ուղարկեց նորան մեռելու խաչի վերայ , եւ չհամար , և յարութիւն տուաւ նորան , եւ արդարացնելու համար , ուրեմն աչքերդ բացված են և կարող ես ասել . « այսուհետեւ հաւատով արդարացածներս խաղաղութիւն կապենք Աստուծու հետ մեր Տէր Յիսուսի միջնորդութեամբ » (Հռովմ . Ե . 1 .) :

Բայց ի՞նչ կանես դու այնուհետեւ : Ղոյրը գնաց նորա ետեւից : Այս չորս խօսքի մէջ է բոլոր նորա կեանքը : Ղոյնպէս կլինի արդեօք քո կեանքն ևս : Ղճուկցիր արդեօք դու ևս կոյրի նման Յիսուսին հետեւել որքան և թանկ արժենար այս քեզ , ոչ թէ կէտով չափ , ոչ թէ հեռուից և ոչ թէ սառնութեամբ , այլ բոլոր սրտով հետեւել և ծառայել նորան : Նա որոշած է այն ճանապարհը , որով դու պարտական ես գնալ . ճանապարհը անապատի մէջով է , բայց տանում է զէպի տուն :

Նա ասաց . « Ես գնում եմ ձեզ տեղ պատրաստելու , և երբ կերթամ և կպատրաստեմ ձեզ տեղ , նորից կգամ և ինձ հետ կառնեմ ձեզ , որ դուք ևս լինիք այնտեղ , ուր ես եմ » . (Յովհ . ԺԴ . 3) : Ահա նորա մեծ և անսահման սէրն առ մեզ :

Ղոյրի աչքերը բացվելով , գնաց Յիսուսի ետեւից , փառք տալով Աստուծուն : Ահա որքան հեռեւորութիւն ցոյց տուաւ կոյրն . ընդունել փրկութիւն , գնալ Յիսուսի ետեւից և փառաբանել Աստուծուն : Արեւմն այժմ դու ևս , ընթերցող . եթէ քո աչքերդ բացվեցան , քո միակ հոգոյ , քո

միակ ցանկութիւնդ Աստուծուն փառաւորել պիտի շինես: Ահա այն ճանապարհը որով մեղքի խաւարից դէպի Աստուծու հրաշալի լոյսը պիտի գնաս: Ահա այն ճշմարիտ դուռը, որով երկնային խաղաղութեան բնակարանը պիտի մտնես: «Եւ բոլոր ժողովուրդը այս տեսնելով փառք էր տալիս Աստուծուն (Ղուկ. ԺԷ. 45):

Հնորհ տուր մեզ, Տէր, այնպէս հետեւելու Յիսուսին, որ բոլոր այս տեսնողները փառք տալին Աստուծուն նորա մեզ արած մեծ ողորմութեան համար: Ա. Կ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՂԲԻԻՐՆԵՐ:

Գիտնական պրոֆէսոր Պ. Պապկանեանի յօդոսած:

(«Արարատ» հոկտեմբեր):

Մենք կտեսնենք, որ վերև մեր յառաջ բերած մատենագիրների անունները գլխաւորապէս կգտնվին Խորենացու շորս Գ—Է գլուխներում այսինքն նորա ղիւցազնական ժամանակի մասին արած բնդհանուր ղիտողութիւնների մէջ, այլև որ Խորենացին ծանօթ էր նոցա աշխատութիւնների հետ այնքան, որքան որ նորա կգտնվէին Եւսիբէոսի մէջ, և թէ նոցա չէ կարելի համարել նորա պատմութեան իսկական աղբիւրները: Աւշք դարձնենք դարձեալ մի տեղի վերայ, ԻԱ գլխում պատմելով, Կտեղիոսի համաձայն, նիւուէի անկման մասին, կաւելացնէ իւրեանից Խորենացին. «Ապա եթէ ասիցեն ուստի մեզ և զնաինեացն մերոց բազմաց այսպէս գտանել զանուանս և զգործս, ասեմ. ի հնոցն ղիւանաց Քաղղէացոց, Ատրեստանեայց և Պարսից»: Ի հարկէ այս տեղը պէտք չէ հասկանալ բառ առ բառ, որովհետև Խորենացին չէ եղած ոչ մին, ոչ միւս և ոչ երրորդ երկրում *):

Բայց Ա. գրքի Ը. գլխում բացատրելով Հայաստանի բուն պատմութիւնը, Խորենացին ուշք է դարձնում գլխաւոր և գրեթէ իւր միակ գրաւոր աղբիւրին, որից նա չէ բաժանվում մինչև Բ. գրքի Ժ. գլխից: Այս աղբիւրը Մար — Աբաս - Կատինայ է:

Առաջին անգամ Խորենացին կիսօտէ նորա մասին Ա. գրքի Ը. գլխում: Մեծ մասամբ Եւսիբէոսից քաղված փաստերի վերայ հիմնելով Հայերի նահապետների կապը Յարէթի սերունդի հետ, նա ձեռնամուխ կլինի

(*) Տասներորդ դարի հւնչակաւոր հայկական պատմաբան Յովհաննէս Կոթողիկոսը, համուտտ հաղորդելով Հայաստանի հին պատմութիւնը, Կորենացու համաձայն, եւ հասցնելով մինչեւ Տեղբանը, կիրկնէ Կորենացու հարցը. «Եւ այդքան անուանք եւ զորոյցք թէ հարցեալ լինի յորմէ՞ գու գիտեւ. գիտացէ գիՔաղղէացոց մատեանքն մեզ ընձեռեցան, որք կան ի նիւուէ եւ յԵւսիայ առ Տեղերիւ դրեալ:» Ի հարկէ Յովհաննէս Կոթողիկոսը չէ տեսած ոչինչ քաղղէական մատեաններ, որոնք պահված էին նիւուէի եւ Եւսիայի մէջ եւ գրված Տեղերի ժամանակը: